

92 (47-925)

II - III

7

Aug 3. 97

25 407 200

700
23-46

0 100 200 300

200 400
work

trans
quad

Aug. 2.

3281

25 OCT 2010

Ms. B. 1. 2. fol. 100 v.

700
23-ULG

792 (47.925)
U-41 *avg*

ԶԵԿՈՒՐՅՈՒՆ

11207

292/43.825 1000
4-91

4-91

9 hours now

10003

ՀԱՅ ԹԱՑՐՈՒՆԻ ՑԱՆԿԱԼԻ ԲԱՐԵՓՈԽՈՒԹԻՒՆ-
ՆԵՐԻՑ ԱՆՀՐԱԺԵՇԱԳՈՅՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կարդացած 1 ն յունիսի 1913 թ. Հայոց Դրամատիկական Բնկերով. առաջին ընդհանուր ժողովին
Թիֆլիսում:



ԹՐ Ի Փ Լ Ի Ս
Տպարան «Հերմէս», Գրաֆուկայա փող. № 6,
1913

30 JUL 2013
00000

7201

005
II-02

ԾՐԱԳԻՐ

ԳԵՂԱՐԻԵՍՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ

1. Կովկասի հայ բեմական գործիչների համագումար
2. Հայ թատրոնական ընկերութիւններ
3. Ռեպերտուար
4. Ազգային էպօպէա
5. Դրամատիկական ստուդիա
6. Թարգմանական լեզու
7. Գրականագէտ-ըեժիսսեօր
8. Ռեպերտուար կազմելը
9. Աշակերտական և մանկական ներկայացումներ
10. Տարբեր թատրոնների րեպերտուար
11. Խումբ կազմելը
12. Ռեժիսուրա

ԳԵՂԱՐԻԵՍԱԿԱՆ ԲԱԺԻՆ

ԳԵՂԱՐԻԵՍԱԿԱՆ ԲԱԺԻՆ



ՅԱՐԳԵԼԻ

ՏԻԿԻՆՆԵՐ ԵՒ ՊԱՐՈՒՆԵՐ !

Զափազանց դժւար ու պատասխանտառ է այն մարդու դերը, որը հրապարակ է գտիս, ժամանակակից թատրոնի բեֆորմների առաջարկներով:

Հասկանալի է իհարկէ, որ ես այսօր ոչ մտադրութիւն և ոչ էլ հնարաւորութիւն ունիմ, ձեր ուշադրութիւնը հրաւիրելու այն բոլոր հասունացած խնդիրների վրայ, որոնցով պիտի դրադւի հայ բեմի արմատական վերստեղծման գործով զբաղւող ժողովը—համագումարը:

Այսօր ես կանգ պիտի առնեմ, այն մի քանի խնդիրների վրայ, որոնք իմ կարծիքով անյետաձգելի անհրաժեշտութիւններ են մեր թատրոնի բարելաւման գործի համար: Սակայն, նախքան յիշւած խնդիրներին անցնելը, թոյլ տւէք ուրախութիւնս յայտնել, այն կարեոր խնդրի դրական ելքի մասին, որը իմ կարծիքով, մեծ չափերով նպաստելու է մեր բեմի շատ կնճռու հարցերի լուծանը:

Խօսքս հայ բեմական գործիչների համագումարի մասին է, որի հրաւիրելու հարցը վերջնականապէս վճռւել է դրական մտքով դեռ անցեալ տարի:

Որովհետև շատ թեր և դէմ կարծիքներ են յայտնւել համագումար հրաւիրելու մասին, լույսով, շատերը նայն իսկ դէմ են եղել համագումարին, համարելով այն, աւելորդ մի բան, այդ

պատճառով էլ խնդրում եմ, ի նկատի ունենալով, որ Կովկասից բացակայութեանս պատճառով հնարաւորութիւն չեմ ունեցել իր ժամանակին արտայայտւելու այդ մասին – թոյլ տալ ինձ, որպէս հայ բեմական ընտանիքի մի անդամին, յայտնելու իմ կարծիքը այն մասին թէ՝ զգացւում է արդեօք այդ համագումարի կարիքը թէ ոչ:

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅ ԲԵՄԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ

ՀԱՅՄԱԿԱՆ

Հայ բեմական գործիչների համագումարի կարիքը առաջին անգամ ես զգացել եմ հինգ տարի սրանից առաջ (1908 թ.): Այն ժամանակ էլ մամուլի միջոցով հրապարակի վրայ եմ դրել այդ հարցը, որը սակայն, խօսակցութեան նիւթ գառնալուց զատ՝ մի այլ շօշափելի օգուտ չբերեց: Անկասկած ներկայումս համագումարի կարիքըն աւելի է զգացւում, երբ Դրամատիկական Ընկերութիւնը ընդարձակում է իր գործունեութեան ծրագիրը և Կովկասի այլ և այլ հայաբնակ վայրերում Դրամատիկական Ընկերութեան ճիւղեր պիտի բացւեն, ուր միանդամայն նոր պիտի դրւի թատրոնական գործը: Հասկանալի է թէ որշափ նշանակալից դեր ունի և կարող է կատարել համագումարը:

Հարցերի ինչ աստիճան կարեոր, ծանրակշիռ լինելուց էլ կախւած կը լինի, իհարկէ, համագումարի լինելու շինելու խնդիրը:

Այդ պատճառով էլ, թոյլ տէք ձեր ուշադրութիւնը հրաւիրել այն խնդիրների վրայ, որոնցով, իմ կարծիքով, պէտք է զբաղւի համագումարը:

1. Համագումարի կազմը:

2. Ընդհանուր տեսութիւն Հայ թատրոնական պատճութեան, ըրջանների բաժանելով:

3. Հայ բեմի յետամնացութեան պատճառները:

4. Հայ թատրոնական ընկերութիւն և սրա վարչութեան ֆունկցիաները:

5. Հայ բեմական գործիչների միութիւն:

6. Ընկերական խմբեր:

7. Թատրոնական բիւրո:

8. Ժողովրդական հանրամատչելի թատրոն:

9. Թատրոնական թանգարան (մուզեյ):

10. Ռուսական բեմական գործիչների համագումարները և նրանց վճիռներն ու հետևանքները:

11. Հայ թատրոնի արագիցիաները.

12. Նեղինակի, բեժիսսեօրի և գերասանի յարաբերութիւնները պիէսը գնելու ժամանակ:

13. Ռեժիսսեօրի և գերասանի յարաբերութիւնները,

14. Թատրոնական գրադարան:

15. Հին և նոր բեմական արւեստը և նշանաւոր բեֆօրմատորների հայեացքները:

16. Նոր հոսանքներ գրամատիկ գրականութեան և բեմական-բեժիսսեօրական արւեստի մէջ:

17. Ժամանակակից թատրոնի գլխաւոր խընդիրները:

18. Բեպերառուար:

19. Բեժիսսուրար:

20. Թատրոնական բեցենգիաներ:

21. Բեմական արւեստի զարգացման և նրա գործիչների ապահովութեան խնդիրը:

22. Թատրոնական գործը գաւառներում:

23. Համագումարի արձանագրութեան հրատարակելը և յաջորդ համագումար նշանակելը: Ահա խնդիրներ, որոնց առաջ պիտի կանգ

առնենք, որոնցով պիտի զբաղւի համագումարը։ Այս խնդիրների մասին գեկուցումներ—ըեփերատներ օր առաջ պիտի ուղարկւեն համագումարը կազմակերպող մարմին։ Եթէ այժմեանից ձեռնարկւի գործին, մինչև եկող տարի այս ժամանակ, որ ամենայարմար ժամանակն է, երբ բոլոր դերասաններն էլ Թիֆլիզ են ժողովւում, կարծում եմ կարելի կը լինի համագումարի խրնդիրը իրականացած տեսնել։ Թէ որչափ յաջող պիտի ընթանան համագումարի զբաղմունքները, այդ կախւած կը լինի համագումարը կազմակերպող մարմինի կարողութիւնից և մասնակցողների ցոյց տւած վերաբերմունքից ու պատրաստականութիւնից։

Մի բան միայն պարզ պիտի լինի ամենքիս համար, որ կովկասեան հայ բեմական գործիչների համագումարը բարոյական ահազին նշանակութիւն պիտի ունենայ մեր թատրոնի հումար և նա թատրոնական գործի կուլտուրական զարգացման մի տեսակ հիմք դնելով, պարզապէս հիմք պիտի դնի հայ թատրոնի վերածնութեան մեծ գործին։

Այժմ դաւնանք այն խնդիրներին, որոնցով ցանկալի է, որ զբաղւէր այսօրւայ ժողովը։

ՀԱՅ ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հայ թատրոնի ամենանեղ օրերին էր, որ մեր մէջ երևան եկան բեմը սիրող անհատներ՝ կազմեցին թատրոնական կոմիտեաներ, Դրամատիկական Ընկերութիւն, կուլտուրական Միութիւն և այլ սեկցիաներ, որոնք իրանց ձեռքն առան թատրոնական գործի նիւթականը և ազատեցին հայ դերասանին չքաւոր կացութիւնից։

Այդպիսով նրանք կարծում, ցանկանում էին թատրոնը դնել իր անհրաժեշտ բարձրութեան վրայ։

Մտադրութիւն չունենալով այստեղ այս ու այն թատրոնական ընկերութեան գործունէութեան գնահատութեան մէջ մտնելու, չեմ կարող այնուամենայնիւ չնկատել, գրեթէ բոլոր այդ ընկերութիւնների սխալը, որի շնորհիւ, նրանց բաւական մեծ ջանքերը համեմատաբար շատ չընչին գեղարւեստական արդիւնք ունեցան։ Նպատակ ունենալով թատրոնը դնել իր կարեոր բարձրութեան վրայ, նրանք աշխատում էին նըրան հետաքրքիր դարձնել մէկ կամ երկու գերասանով։ Հասկանալի է իհարկէ, թէ ինչու նըրանք չհասան իրանց նպատակին։ Նրանք մոռացել էին, անուշադիր էին թողել գեղարւեստական անսամբլի խոշոր նշանակութիւնը, որը այդ ժամանակ արդէն իր յաղթական փողը, բոլոր թատրոնների համար, արդէն հնչեցրել էր։

Այլ էին հասարակութեան պահանջները 15 տարի առաջ, այլ դարձան յետագայ տարիները և միանգամայն այլ են ներկայումս։

Թէ որ ընկերութիւնը, կոմիտեն կամ սեկցիան աւելի լաւ է զեկավարել գործը, կամ գըրանք բոլորն էլ, գեղարւեստական հասկացողութեամբ տւել են արդեօք որևէ մի արդիւնք հայ թատրոնին, գրանց գնահատութեան մասին չէ, որ ես պիտի խօսեմ այսօր։ Թող այդ բոլորի մասին անաշառ քննադատութիւնը, պատմութիւնը խօսի։ Խսկ ես ուզում եմ ասել, որ հէնց այդ ընկերութիւնների ընանձնագրը և այն էլ հայ թատրոն չի կանչի մասնակիութեական օրերին, անշուշտ ննուրանալի ուրախալի երևոյթներ էին և արժանի գույնապէս ընդգծելու, մանաւանդ

որ շահադիտական—անտրպրենեօրական միտումներով չէ, որ դրանք կազմակերպւել են, այլ սոսկ մայրենի թատերական արևեստը բարձրացնելու գեղեցիկ ցանկութեամբ:

Անկասկած նոյն գեղեցիկ նպատակին է ձրգտել Թիֆլիզի Դրամատիկական ընկերութիւնը և նոյն գեղեցիկ ցանկութեամբ, նա ընդարձակում է իւր ծրագիրը, ցանկանալով ձեռնամուխ լինել հայ թատրոնի զարգացման գործին աւելի լայն չափերով:

Սակայն այլ բան է ծրագիրը, այլ բան նրա իրագործումը:

Նախ քան նոր գործին ձեռնամուխ լինելը, աւելորդ չի լինի կարծում եմ, օգտւել հին գործի սխալներից, զանցառութիւններից և առհասարակ թատրոնական աշխարհում տեղի ունեցած նշանաւոր երևոյթներից։ Հասկանալի է իհարկէ, որ երբ ես սկսեմ խօսել սխալների, զանցառութիւններէ և վնասակար տրադիցիաների մասին, ի նկատի պիտի ունենամ, ոչ միայն Թիֆլիզի Դրամատիկական ընկերութիւնը, այլ և առհասարակ թատրոնական գործը։ Եւ եթէ մինչև այսօր էլ դեռ չի յաջողւել գործը այնպիսի հիմքերի, սկզբունքների վրայ գնել, որ ցանկալի չափով արդարացնի իր վրայ դրած յոյսերը, եթէ մինչև այսօր էլ տեղի են ունենում բաւական խոշոր սխալներ, զանցառութիւններ, սրա համար պէտք չէ, իմ կարծիքով, գործը մատնել սառն անտարբերութեան, գիտակցաբար դէպ անդունդ մղել նրան և սպանել, այլ անհրաժեշտ է, որ երևան գան ձեռնհաս անձինք, գործիչներ, արժանաւոր քննադատներ, թատրոնական գործին լաւ տեղեակ անհատներ և օգտակար լինեն մայրենի

բեմին իրանց խորհուրդներով, նկատողութիւններով ու ցուցմունքներով։

Հասկանալի է ի հարկէ, որ սրանով ես չեմ ուզում ասել, թէ անհրաժեշտ է, որևէ թատրոնական օրէնք ստեղծել, կամ ղեկավարւել որոշ տրադիցիաներով։ անտանելի և կորստաբեր են առհասարակ բեմական, օրէնք դարձած բոլոր այն տրադիցիաները, որոնք այնքան մահացու վէրքեր են հասցըել թէ ընդհանրապէս և թէ մասնաւորապէս մեր թատրոնին։

Իմ կարծիքով լաւ օրէնքներ ընդհանրապէս չկան, գոյութիւն չունեն։ Խսկ եղածներն էլ կարող են նշանակութիւն ունենալ միայն իրանց տեղի և ժամանակի համար։ Ի դէպ փակագծի մէջ պիտի ասեմ, որ մեր բեմի առաջխաղացման խոչնդուտներից հազիւ թէ նշանաւորը չի հանդիսացել փոտած տրադիցիաների այն շարքը, որը փայփայւել է հայ թատրոնում և ստեղծել մեզ ծանօթ դրութիւնը։

Երբ խօսում ենք հայ թատրոնի մասին, չենք կարող մոռացութեան տալ ու չխօսել ուռական թատրոնի մասին, որի բարեբախտաբար անմիջական ազդեցութեան տակ է գտնւել և գտնւում է հայ թատրոնը։

Լուել այդ թատրոնի մասին մեծ յանցանք է և մանաւանդ այն ժամանակ, երբ համաշխարհային թատրոնական պատմութեան մէջ նշանաւոր դեր խաղացողը, ահազին յեղաշրջում առաջ բերողը՝ եղել է ոռւսական թատրոնը։

Եւրոպական թատրոնների ամենաաճքի ընկնող ըեփորմատոր գիտնականները, խոստովանում են ոռւսական թատրոնական արւեստի առաջնութիւնը, իսկ մենք ոռւսական թատրոնի այսպէս ասած, քթի տակ, դրեթէ չենք կարողանում,

կամ չենք ուզում օգտւել նրանից: Եթէ ինձ ասեն, որ ես չեմ կարող միանգամայն հերքել թէ մեր ղեկավարները չեն օգտւել ոռւսական թատրոնից, ապա ես պիտի պատասխանեմ, որ չեմ կարող ցաւ չը յայտնել, որ նրանք օգտւել են, դժբախտաբար, ոռւսական գաւառական թատրոններից, որոնք գրեթէ, առանց բացառութեան, սոսկ վաճառականական—շահաղիտական հիմքերի, սկզբունքների վրայ են լինում հիմնւած:

Կովկասի Հայ Դրամատիկական ընկերութիւնների համար տեղական, գոնէ ներկայումս գոյութիւն ունեցող ոռւս թատրոնները չեն կարող և չպէտք է օրինակ լինեն: Բաւական է ասել, որ իւրաքանչիւր գաւառական անտրպինեօրի գլխաւոր խնդիրը՝ ցանկութիւնն է գտնել այնպիսի մի պիէս, որը կարողանայ դառնալ այս պէս ասած «ԵՎՈՅԱ»: Այս նպատակով հասկանալի է, որ նա ամեն կերպ պէտք է աշխատի յարմարւելու ամբոխի ճաշակին և ընտրել պիէս միանգամայն անկախ նրա գեղարւեստական-բեմական արժանիքներից: Կարելի՞ բան է, որ այսպիսի թատրոնները մեզ համար օրինակ լինին, կամ մըցակից համարուին:

Սակայն դուք եկեք ու տեսէք, որ եթէ պատահում է երբեմն, որ Թիֆլիզի հայ թատրոնը կարողանում է մըցել տեղական ոռւս թատրոնի հետ, օ՛, այդ համարում է մի աեսակ յաղթութիւն, և մենք ոչոքից չենք թագցնում մեր յաղթական զգացմունքից առաջացած ողորմելի ինքնագութիւնը: Թիֆլիզի հայ թատրոնը կարողանում է մըցել մի որևէ գաւառական անտրպարինեօրի խմբի հետ. ինչ մեծ բան: Ինքնըստինքնեան համականալի է, որ Հայոց Դրամատիկական ընկերութեան թիֆլիզի թատրոնը ամբողջ

գլխով բարձր պիտի կանգնած լինի. մի որևէ է անտրպինեօրի թատրոնից: Միթէ պարզ չէ: Թիֆլիզը մեր թատրոնի համար այն նշանակութիւնն ունի, ինչ նշանակութիւն, որ ունի Մոսկաւան ոռւս թատրոնի համար:

Թիֆլիզը մեր մտքի, մամուլի կենտրոնն է: Եթէ մի հայ ուղենայ տեսնել հայկական ամենալաւ թատրոնը, հասկանալի է, որ նա չի գնայ Մոսկաւ, այլ կը գայ Թիֆլիզ: Ճիշտ այնպէս, ինչպէս որ մի ոռւս ցանկանալով իր մայրենի ամենալաւ թատրոնը տեսնել, չի գայ Թիֆլիզ, այլ կգնայ Մոսկաւ: Այս տեսակէտից մօտենալով ինսդրին, չի կարելի չնկատել, որ դէպի Թիֆլիզի թատրոնը մենք ցոյց ենք տալիս, ընդհանրապէս, չափազանց թեթև վերաբերմունք: Նա էլ շարունակելով ղեկավարւել մի անգամ ընդունւած տրադիցիաներով, շատ և շատ հեռու է մնացել իր կարեւոր բարձրութեանը մօտենալուց: Մեզ համար անհրաժեշտ է ի մօտոյ ծանօթանալ մայրաքաղաքների ոռւսական թատրոնական արւեստին: Սակայն դժբախտաբար պիտի նկատեմ, որ ոռւսական թատրոնական աշխարհում տեղի ունեցող, նոյն իսկ, նշանաւոր երկոյթները, մեր թատրոնի այսպէս ասած, ղեկավարների ուշադրութեանն անգամ չեն արժանանում, որ շատ ցաւալի է: Ի դէպ, ես կը յիշեմ մի փոքրիկ, բայց բաւական բնորոշ դէպք:

1908 թ. մարտին, Մոսկաւյում բացւեց Ռուսաստանի բեմիսեների համագումարը, որին ես մասնակցում էի, ոչ որպէս ներկայացուցիչ՝ այլ որպէս մի մասնաւոր անհատ: Համագումարի նախագահը, կարդալով զանազան թատրոններից ուղարկւած ներկայացուցիչների ցուցակը, մի տարօրինակ ժամանակ պարագանք յայանեց, որ հայ

թատրոնից միայն մի մարդ է մասնակցում և այն էլ ոչ որպէս ներկայացուցիչ: Յիշելու է, որ այդ ժամանակը, բացի Թիֆլիզի Դրամատիկական ընկերութիւնը, գործում էր նուև Բագրի Կուլտուրական Միութեան թատրոնական սեղիան: Սակայն այդ երկու ընկերութիւններից և ոչ մէկը կարևոր չէր համարել այդ խնդիրը իր ուշադրութեանն արժանացնել և ներկայացուցիչ ունենալ համագումարում:

Բացի անտարբերութիւնից, որոշ գեր խաղացել են անկասկած և փտած տրագիցիաները:

Ես գիտեմ, առհասարակ թատրոնում, մասնաւանդ հայ թատրոնում որևէ մի բեփորմ, թարմութիւն, բարենորոգում մացնելը դժւարին գործ է: Ինձ յայտնի են շատ և շատ այլ և այլ փաստեր, որոնց թւելը մեզ չափազանց հեռուելը տանէր, որոնք սակայն մօտ ապագայում հրապարակ պիտի համեմ և աւելի ու աւելի պարզ պատկերացնեն այն դրութիւնը, որ ստեղծել է հայ թատրոնում: Այս բոլորից յետոյ ես չեմ կարող բարձրածայն չասել հրապարակով, որ միայն այն գէպըում, եթէ Դրամատիկական ընկերութիւնը մի կողմ կը շպրտի փտած, թունաւոր տրագիցեաները, կը փոխի արմատապէս իր գործելակերպը, և մի նոր ընթացք, ուղղութիւն կընդունի այդ գէպըում միայն, կըկնում եմ, նա կարող կը լինի վերածնել վերստեղել հայ թատրոնը:

Ր Ե Պ Ե Ր Տ Ո Ւ Ա Ր

Հայ թատրոնի վերածնութիւնը կատարելու է բեպերտուարի և բեժիսսուրայի վերստեղմամբ:

«Մեր բեմի անկման պատճառները» վերնազրով մի յօդւածում, որ լոյս տեսաւ 1901 թւին, ես ծանրանում էի զլխաւորապէս րեժիսուրայի և բեպերտուարի վրայ:

Այսօր, երբ ամբողջ 12 տարի է անցել այդ օրից և չնայած, որ այդ ժամանակամիջոցում թատրոնական շատ ու շատ յօդւածներ են լոյս տեսել մեր մամուլում, բարենորոգման այլ և այլ ծրագիրներ առաջարկել, այնուամենայնիւ այդ հին ու միշտ նոր ու կարևոր խնդիրը, այսօր կրկին դրւած է մեր առաջ: Եւ այդ հասկանալի է: Ապարդիւն կանցնեն թատրոնի վերածնութեան համար գործադրւած բոլոր ջանքերը, եթէ թատրոնը զուրկ է առողջ բեպերտուարից և գերարւեստական բեժիսսուրայից:

Ես ուզում եմ մատնանշել նախ՝ մեր թատրոնի ցանկալի բեպերտուարի, ապա մեզ համար մի քանի ցանկալի նորութիւնների և բեպերտուար կազմելու սխատեմի ու մի քանի այլ տեխնիկական սխալների վրայ:

Բեպերտուարի հարցը այսպէս պիտի դնել նախ՝ ինքնուրոյն պիէսներ, որոնց առաջ գալուն ջանք չըպիտի խնայենք, և ապա թարգմանական: Մեր տրամադրութեան տակ են՝ կլասիկ կոմեդիաներ, ողբերգութիւններ, բոմանտիկ դրամաներ, կենցաղագրական կոմեդիաներ, դրամաներ, մելոդրամաներ, պատմական պիէսներ և այլն...

Գլխաւոր խնդիրն այն է, ընտրել այդ բոլորից յարմարագոյն առողջ պիէսաներ, չենթարկելով մոդայի թունաւորիչ ազգեցութեան և ստեղծել առողջ թատրոն: Յիշելու է Լ. Տօլստոյի այս նիւթի մասին գեռ 1886 թւին «Дневникъ русскаго актера» թերթում լոյս տեսած յօդւա-

ծը, ուր նա կը կնում է՝ «Տւեք ժողովրդին՝ ստուգությունը, ստուգությունը»։

Այս, գեղարւեստական-բեմական առողջ բեպերուարից ու բեֆիսուրայից յետոյ միայն կարող է ստեղծւել իսկական թատրոնը։

ԱԶԳԱՅԻՆ ԷՊՈՊԵԱ

Խօսելով բեպերտուարի մասին, չեմ կարող չը նկատել, մի ցաւալի երևոյթ։ ինչու մենք դրեթէ չունենք լուրջ մշակւած, գրական-գեղարւեստական արժանիքներով օժտւած մեր ազգային պատմութիւնից պիէսներ։ Միթէ իրօք այդ պատմութեան մէջ չկան գոհարներ և, միթէ մեր դրամատուրգները չէին կարող որոնել, գոհնել և ցոյց տալ այդ գոհարները թէ դերասաններին և թէ ժողովրդին, որին կամ շատ քիչ է յայտնի և կամ միանգամայն անյայտ են։

Չէ որ մեր ազգը այնքան հետաքրքիր պատմութիւն ունի։ Ի՞նչ կայ մարդկային, որ նրան ծանօթ չը լինի։ Եթէ լինում են մոմենտներ, երբ մի մարդու կամ ազգի կեանքը, բարձրանում, հասնում է երջանկութեան գագաթնակէտին և ընկնում դժբախտութեան անդունդը, անկարելի է, որ այդտեղ գոհարներ չը լինեն։

Եւ մենք սպասում ենք, որ մեր դրամատուրգները ցոյց տան մեզ և մենք էլ մեր ժողովրդին իր հարազատ գոհարները։

Ահա գրանք մեզ համար կը լինեն իսկական ամենացանկալի նորութիւնները։ Բեմական-գեղարւեստական պիէսներ մեր ազգային պատմութիւնից, սրա կարիքը վաղուց է զգացւում, սակայն մինչև այսօր էլ այդ պակասը լրացնելու յաջող փորձերը չեն եղել։ Որ ժողովուրդը սիրում և ուզում է տեսնել իր ազգային պատմու-

թիւնից պիէսներ, դրա պերճախօս փաստերն են այն լիքը թատրոնները երբ բեմ են հանւում, «Շուշանիկ», «Արշակ Բ.», կամ «Վարդան Մեծն» և նման ողորմելի պիէսներ։

Հասկանալի է, իհարկէ, որ ոչ մի գեղարւեստի սկզբունքը յարգող լուրջ թատրոն նման պիէսներ բեմ չի հանի։

Եւ իրօք, հօ չի կարելի հրապարակի վրայ եղած այդ պիէսները մեզ համար պատմական պիէսներ համարել։ Ես կասէի, եթէ հնարաւոր է նման պիէսները, պիտի ոչնչացնել մինչև վերջին օրինակը։ Մենք սպասում ենք մեր ազգային պատմութիւնից գեղարւեստական գործեր և ոչ շահագործման նպատակով թխւած տափակութիւններ։

Շիլերն ասում է՝ «Պէտք է վերածնել անցեալի ոյժը, կենդանացնել նրա գործերը, տալ ուժեղ բնաւորութիւններ, ալեկոծել և վեհացնել հոգիները։ Երբ դիմում ես թոյլ սերնդին, պէտք է կարողանաս նրան շարժել, թափ տալ, վեհ, վսեմ տպաւորութիւններով։»

Մենք սրտատրով սպասում ենք պիէսներ մեր պատմութիւնից։ Ինքնըստինքեան հասկանալի է, ի հարկէ, որ իմ ասածներից չը պէտք է եղրակացնել, թէ մեր թատրոններում տեղ պիտի գտնի միայն մեր ազգային էպօպէտն։ Ո՛չ, մեր թատրոնում տեղ պիտի գտնեն բոլոր ազգերի մեծ գործերը։ Թող որ բոլոր աշխարհի հերոսները և մեր հերոսները լինեն, և բոլոր ազգերի ու ժամանակների ժողովրդական հերոսների համար թող մեր թատրոնն էլ մի երկրորդ հայրենիք լինի։

Բայց նախ և առաջ մենք մեր սեպհականը, մեր հարազատն հնք ուզում տեսնել։

ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ՍՏՈՒԴԻԱ

Ամեն ջանք գործ պիտի դնել հայ հեղինակներին գործի հրաւիրելու—հայ բեպերտուար ստեղծելու:

Սրա համար հարկաւոր չէ, ի հարկէ, ամեն մի անփորձ հեղինակի փորձնական գործերը բեմ հանել:

Թատրոնը լաբարատորեա չէ: Նա չէ սիրում, որ զլիխն փորձեր կատարեն: Նա պահանջում է աւարտած գեղարւեստական գործեր և այդ գործերը գեղարւեստօրէն վերարտադրող մշակւած գերասաններ:

Ի՞նչ անել. ի՞նչպէս ուրեմն զարկ տալ հայկական դրամատիկական գրականութեան զարգացմանը: Ի՞նչպէս անել, որ հայ հեղինակը, կամ աւելի ճիշտ է ասել, սկսնակ հայ գրողը—դրամատուրգը, անտուն, անօջախ չը մնայ, որ նա էլ արտայայտելու և քննադատուելու մի տեղ ունենայ, որի չլինելուց, համոզւած եմ, քիչ շնորհալի, ընդունակ ոյժեր չեն թառամում չը ծաղկած:

Եթէ մեծ տաղանդը, ինչ պայմանների մէջ էլ լինի նա չի մեռնի, միջակ ընդունակութիւնը, առանց ջրի ու լոյսի անկասկած կը թառամի: Ստեղծենք մի օջախ մեր սկսնակ դրամատուրգների և սկսնակ գերասանների համար:

Ես կարծում եմ ամենանպատակայարմար միջոցը այն կլինի, որ Դրամատիկական ընկերութիւնը, կունենայ իր Դրամատիկական ստուդիան—արւեստանոցը:

Ահա այդ ստուդիայում, թէ խմբի սկսնակ գերասանները, թէ աշխատակից անդամները, իրենց բեմին նորել ցանկացողները, բեմի ու-

սուցչի, ստուդիայի բեժիսսեօրի ղեկավարութեամբ վարժւելու են դրամատիկական բեմական արւեստի մէջ:

Այստեղ էլ կարդացւելու, վերլուծութեան են ենթարկւելու և խաղացւելու հեղինակների յոյս տւող այն պիէսները, որոնց մեծ բեմերի վրայ ներկայացնելը դեռ վաղաժամ է համարւել:

Ստուդիայի ներկայացումներին, բացի քննադատներից ներկայ է լինում, վարչութեան կողմից հրաւիրւած յատուկ հասարակութիւն, գլխաւորապէս ի հարկէ, գուական-գեղարւեստական աշխարհից: Ահա այդպիսով նախ՝ բոլոր սկսնակ հայ դրամատուրգները կունենան մի յենարան, այսպէս ասած, մի օջախ, և ապա երիտասարդ, սկսնակ գերասանները կունենան մի վարժարան, որտեղ նրանք կը մարզւեն դրամատիկական արւեստի գէթ տարրական գիտելիքներում, անելով իրենց սկզբնական քայլերը որոշուղութեամբ, որ այնքան կարևոր է և դժբախտաբար գոյութիւն չունի մեր թատրոնում:

Դրամատիկական ստուդիան չի կարող զարկ չը տալ թէ մեր մայրենի բեմական արւեստին և թէ մանաւանդ մեր դրամատիկական գրականութեան ծաղկելուն, զարգանալուն:

Այժմ ես խօսում եմ ընդհանուր գծերով: Երբ կարենը լինի ես կը տամ ամենամանրամասն տեղեկութիւններ նման ստուդիաների կազմակերպութեան և նրանց տւած արդիւնքների մասին:

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԼԵԶՈՒ

Այժմ անցնենք մեր թատրոնի մի այլ հիմնդու տեղին—թարգմանական լեզվին:

Հաւատացէք եթէ ասեմ, որ շատ յաճախ, մեր առանց այն էլ խիստ սահսանափակ թւով փորձերից երկուսը, երբեմն էլ աւելին զոհում ենք այդ լեզվի, այսպէս ասած շտկելուն։ Ես գիտեմ, որ մենք իրաւունք չունինք հեղինակի, կամ թարգմանչի լեզուն ուղղելու, շտկելու։ Սակայն, նախ այդ թարգմանիչներից շատերը հենց իրանք են թոյլ տալիս, իսկ յաճախ էլ այնքան անհարազատ, թոյլ է լինում թարգմանութիւնը, որ իրաւունքի խնդիրը այլ ևս ինքնըստինքեան ընկնում է։ Այս խնդիրը արժանի է լուրջ ուշադրութեան։

ԴՐԱԿԱՆԱԳԷՏ ԻԵԺԻՍՍԵՅՐ

Ես առաջարկում եմ հայ թատրոնում մըտցնել վերջին տարիները, շատ օրինակելի թատրոններում ընդունած գրականագէտ բեժիսսեօրի պաշտօնը։ Սրա պարտականութիւնն է կարդալ բեպերտուարի բոլոր պիէսները և իր կարծիքը, գլխաւորապէս ի հարկէ, լեզվի մասին, յայտնել վարչութեան կամ բեպերտուարը դեկավարող մարմնին։

Գրականագէտ-բեժիսսեօրի համար փորձերին ներկայ գտնւելը պարտադիր և անհրաժեշտ չի համարւում։

Վարչութիւնն ստանալով՝ հեղինակից կամ թարգմանչից բեպերտուարի պիէսը յանձնում է գրականագէտ-բեժիսսեօրին, որի պատասխանաւութեանն է թողնուում ամբողջովին լեզվի խնդիրը։

Գրականագէտ-բեժիսսեօրից պիէսն անցնում է վարչութեան միջոցով գլխաւոր բեժիսսեօրին, որից յետոյ այլևս պիէսի լեզվի որև է փոփո-

խութեան ենթարկելը անթոյլատրելի է համարւում։

Գրականագէտ-բեժիսսեօրի խնդիրը. իմ կարծիքով, չափազանց կարևոր է և արժանի. է շատ լուրջ ուշադրութեան։

ԲԵՊԵՐՏՈՒԱՐ ԿԱԶՄԵԼԸ

Այժմ անցնենք բեպերտուար կազմելուն։ Հնարաւոր է արդեօք ունենալ ցանկալի բեպերտուար, դեկավարւելով բեպերտուար կազմելու ներկայ ձեռվ։

Ենթադրւում է, որ հնարաւոր է 3, 5 կամ թէկուզ 15 վարչական ժողովներ գումարելով բեպերտուար կազմել։

Այդ միանգամայն անհնար է և ոչ մի կանոնաւոր թատրոնում բեպերտուար կազմելու այդպիսի սիստեմ չկայ։

Բեպերտուարը կազմւում է աստիճանաբար։ Վարչութիւնը չի կարող, նա ֆիզիկական հնարաւորութիւն չի ունենայ բեպերտուար կազմելու։ Նա հօ չի կարող, իրօք իր բոլոր մասնաւոր գործերը թողնել և հետեւ դրամատիկական գրականութեան անթիւ նորութիւններին, հետեւել լոյս տեմնող պիէսների այն սարսափելի հոսանքին, որ հեղեղում է ամբողջ թատրոնական աշխարհ։ Այդ անելու համար վարչութիւնը նախ և առաջ ժամանակ չի ունենայ։ Եւ սրանով էլ կարծում եմ ամեն ինչ ասաած է։ Քանի որ վարչութիւնը ժամանակ չի ունենայ, նշանակում է կամայ-ակամայ բեպերտուարի խնդիրը կը դառնայ երկրորդական, այսպէս ասած ազատ ժամերի զբաղման առարկայ, որի հետևանքը այն կը լինի, որ բեպերտուար չի լի-

նի: Այս հօ անվիճելի է: Ուստի միակ ելքը կը լինի այն, որ հետևելով կայսերական, Գեղարւեստական և այլ նշանաւոր թատրոնների օրինակին՝ բեպերտուարի խնդիրը կը թողնվի բեժիսսեօրի կամ յատկապէս բեպերտուարը դեկավարող ձեռնհաս անձնաւորութեան պատասխանաւութեան:

Վարչութիւնը, որի կոնտրոլի ներքոյ, բայց ինքնուրոյն, գործում է բեժիսսեօրը, հաստատում է, եթէ ցանկալի է համարում բեժիսսեօրի ներկայացրած բեպերտուարը: Այս հնարաւոր է և ցանկալի: Այսպէս է կազմւում բեպերտուարը բոլոր կանոնաւոր թատրոններում:

Բեպերտուարի կազմելը դժւարին և խիստ պատասխանաւու գործ է և ամենափայլուն կերպով կարող է բնորոշել, կազմողի գրական գեղարւեստական ճաշակն ու բեմական պատրաստականութիւնը:

Շատ յաճախ կարելի է մատնանշել բեպերտուարի մէջ տեղ գտած այնպիսի պիհէսների վրայ, որոնք փչացնում են հասարակութեան երեակայութիւնը, ճաշակը, զարգացնում նրա մէջ վատ քնազդներ և շատ յաճախ էլ վիրաւորում ժողովրդի ինքնասիրութիւնը: Սրանք շատ վրտանգաւոր խնդիրներ են և երբէք անհետեանք չեն անցնում:

Բեպերտուար կազմելու սիստեմը փոխելով կը վերանայ և այն անհեթեթութիւնը, որ իբր թէ անկարելի է բեպերտուարը կազմել մինչև մայիս:

Եթէ բեպերտուար կազմողը ծանօթ է և հետևում է գրամատիկական գրականութեան, եթէ նա հնարաւորութիւն է ստեղծում պիհէսները ստանալու անմիջապէս և չի սպասում թէ երբ

է ոռւսաց խումբը մի յարմար պիհէս խաղալու, որ ինքն էլ մտցնի ըեպերտուարի մէջ, ինչպէս այդ եղել է տարիներ շարունակ, եթէ նա ձեռնընաս է, այդ զէպըում, ես պիտում եմ, որ միշտ կարելի է բեպերտուարը կազմել մինչև մայիս:

Ինձ յայտնի են սեղոններ, երբ խմբերը ժողովւել են, ներկայացումներ պիտի սկսել և վարչութիւնը պիհէս չի ունեցել:

Մինչդեռ փորձերը մեզ ցոյց են տւել, որ սեղոնի ընթացքում, կարող են հրապարակ գալ ամենաշատը 3—4 թարգմանական և մի այդքան էլ ամենալաւ դէպըում ինքնուրոյն պիհէսներ:

Լաւ. Ենթադրենք, որ բեպերտուարը կազմւած է և սեղոնի ընթացքում մի նոր, լաւ պիհէս է ստացւում ու մենք էլ հնարաւորութիւն ունինք ներկայացնելու. ով կարող է մեզ արգելել, որ մենք մեր բեպերտուարի համեմատաբար թոյլ պիհէսը փոխարինենք աւելի լաւ, նոր պիհէսով:

Կրկնում եմ բեպերտուարը պիտի կազմւի մինչև մայիս. այդ ոչ միայն ցանկալի՝ այլ անհրաժեշտ է: Սրա անհրաժեշտութիւնն աւելի զգալի կերեայ մեզ, երբ խօսենք խմբի կազմակերպութեան մասին: Սակայն նախ պիտի խօսեմ աշակերտական, մանկական և տարբեր թատրոնների բեպերտուարի մասին:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԵՒ ՄԱՆԿԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՅ-
ՑՈՒՄՆԵՐ

Երբ խօսում ենք թատրոնի, բեպերտուարի մասին, իրաւունք չունենք մոռացութեան մատնելու մեր մասաղ սերունդը, մեր թատրոնի ապագայ հասարակութիւնը: Հայ մանուկներն ու

ու աշակերտութիւնը, միանգամայն անբացատրելի պատճառներով զրկւած են հայկական ներկայացումներից։ Աններելի յացանք կը լինէր, մանկական և աշակերտական ներկայացումների հարցը գործունէկութեան ծրագրի մէջ չմտցնելը։

Աշակերտական ներկայացումների ըեպերտուարը կազմւած պիտի լինի գլխաւորապէս գեղարւեստական-կլասիկ և ազգային պատմական պիէսներից։ Իսկ մանկական ներկայացումների համար կարելի է օգտւել թէ ինքնուրոյններից, որոնք անկասկած առաջ պիտի գան ըստ պահանջի և թէ Մոսկուայի մանկական թատրոնի ժիւրիի կողմից հաւանութեան գտած պիէսներից։

ՏԱՐԲԵՐ ԹԱՏՐՈՒՆԵՐԻ ԲԵՊԵՐՏՈՒԻԱՐ

Խօսելով ըեպերտուարի պիէսների ընտրութեան մասին, չեմ կարող չնկատել, որ միևնոյն քաղաքում միևնոյն խմբի, գանազան թատրոններում, միևնոյն ըեպերտուարի ներկայացնելը ես համարում եմ միանգամայն աննպատակայարմար, ինչպէս այդ անում է Դրամատիկական ընկերութեան վարչութիւնը Արտիստական թատրոնի, Ժողովարանի բեմի և Ժողովրդական տան նկատմամբ։

Միթէ պարզ չէ, որ եթէ մի պիէս, որը թէ ներկայացման տեխնիկական յարմարութիւնների և թէ հասարակութեան ըմբռնման տեսակէտից հնարաւոր ու նպատակայարմար է համարում ներկայացնել մի թատրոնում, նոյն պիէսը թէ այս և թէ այն տեսակէտներից կարող է անհնար և շատ անգամ նոյն իսկ վնասակար հանդիսանալ մի այլ թատրոնի հասարակու-

թեան համար, նրա թատրոնական դաստիարակութեան նկատմամբ։

Իւրաքանչիւր թատրոն պիտի ունենայ իր բեմական տեխնիկական յարմարութիւնները և մանաւանդ իր հասարակութեան թատրոնական դաստիարակութեան համապատասխան ըեպերտուարը։

Թիֆլիզը մեր մտքի, մամուլի կենտրոնն է. այստեղ է, որ կարող է և պէտք է լինի ամենաօրինակելի հայ թատրոնը։ Այդ թատրոնի քըննադատի գրիշը պիտի գտնւի լուրջ պատրաստած, ձեռնհաս և խիստ անաշառ քննադատի ձեռքում։ Այդ թատրոնի վրայ, մենք նայում ենք ու սպասում, որ նա դառնայ մեր մայրենի բեմական արւեստի իսկական տաճարը, մեր գեղարւեստական թատրոնը։

ԽՈՒՄԲ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼԸ

Այժմ անցնենք խմբի կազմակերպման։

Այսպէս ուրեմն, երբ վարչութիւնը հրաւիրում է բեժիսսեօր՝ բեժիսսեօրը ներկայացնում է ըեպերտուարը վարչութեան ի հաստատութեան։ Երբ ըեպերտուարը հաստատւած է, այնուհետև վարչութիւնը բեժիսսեօրի հետ միասին ձեռնարկում են խմբի կազմակերպման ըստ ըեպերտուարի։

Անպայման ըստ ըեպերտուարի։

Ես ասում եմ անպայման ըստ ըեպերտուարի, որովհետև յաճախ պատահել է, որ ոչ ըստ ըեպերտուարի կազմած խմբերում, դերասանութերասանուհներից շատերը, ամբողջ սեղոն մընացել են գրեթէ անգործ, կամ ստացել են միքանի դերեր և այն էլ ոչ անհրաժեշտօրէն, ո-

լովինետե նոյն դերերը խաղացող մի այլ դերասան, որ նոյնպէս հրաւիրւած է եղել, մնացել է անգործ։ Այս հանգամանքը չէր կարող, ի հարկէ, ցանկալի ազդեցութիւն ունենալ, ընկերութեան առանց այն էլ սուղ միջոցների վրայ։

Յաճախ էլ պատահել է, որ հրաւիրւել են համանման դերեր խաղացող մի քանի դերասաններ, մինչդեռ հէնց այնպիսի մի դերասան, որի անհրաժեշտութիւնն զգացւել է սեզոնի ընթացքում, հրաւիրւած չի եղել։

Հասկանալի է, ի հարկէ, որ նման զանցառութիւններից չէր կարող չը տուժել գործի թէ գեղարւեստականը և թէ նիւթականը։

Շատերն ինձ առարկում են, թէ անկարելի է ըստ ըեպերտուարի խումբ կազմել, որովհետեւ ըեպերտուարը ուշ է կազմւում։ Ես էլ հէնց զրադէմ եմ բողոքում, որ ըեպերտուարը իզուր է ուշ կազմւում։ Ինչպես կարելի և անհրաժեշտ է, որ կազմւի մինչև մայիս։ Ես արդէն ցոյց տւի դրա հնարաւորութիւնը։

Կը կնուժ եմ, երբ կը փոխւի ըեպերտուար կազմելու սիստեմը, այն ժամանակ էլ կը վերանայ այն անհեթեթութիւնը, որ իրը թէ անկարելի է ըեպերտուարը կազմել մինչև մայիս։ Սորանով էլ ինքնըստինքեան կը վճռի ըստ ըեպերտուարի խումբ կազմելու խնդիրը։

Թ Ե Ժ Ի Ս Ս Ո Ւ Ր Ա

Այսպէս ուրեմն՝ ըեժիսսեօրը հրաւիրւած է, ըեպերտուարը կազմւած և խումբն էլ պատրաստ։ Մնում է, որ գեղարւեստական ըեպերտուարը գեղարւեստօրէն էլ ներկայացնելի։

Այստեղ բնականաբար առաջ է գալիս այն

խոշոր հարցը, որը տասնեակ տարիներից ի վեր զբաղեցնում է աշխարհիս բոլոր նշանաւոր բեմական գործիչներին։ Ես խօսում եմ ըեժիսսուրֆայի մասին։

Խօսելով բեմական դրւածքների տեխնիկայի մասին, չեմ կարող առանձնապէս կանգ չառնել չափագանց կարևոր մի կէտի վրայ։ Խօսքս երկու ստեղծագործող տարրերի մասին է։

Խօսելով բեժիսսեօրական և դերասանական աշխատանքի մասին, մի տեսակ հարց է ծագում, թէ որին պիտի նախապատւութիւնն տրւի թատրոնում և ինչպէս որոշել մէկի և միւսի իրաւունքները, քանի որ երկուսն էլ ստեղծագործող տարրեր են թատրոնում։ Ինչպէս յայտնի է, համեմատաբար շատ վաղուց չէ, որ ըեժիսսեօրին սկսել են ճանաչել, որպէս ստեղծագործող արւեստագէտ, որպէս ներկայացման պատասխանատու ղեկավար։

Բայց և այնպէս շնորհիւ այն բազմազան հոսանքների, որ առաջ են եկել վերջին տասնամեակին դրամատիկական-ըեժիսսեօրական արւեստի մէջ, այժմ ստեղծւել է թատրոնում մի սոսկալի քառօւն։

Ներկայումս գեղարւեստական անսամբլի նըշանակութեան հետ կապւած ըեժիսսեօրի նշանակութիւնը այնքան է բարձրացել, որ առաջ են եկել մի շարք ըեփորմատոր—ըեժիսսեօրներ համաշխարհային հոչակով։ Ծեժիսսեօրի նշանակութեան այսչափ բարձրանալով՝ առաջ եկան անձինք, գործին ոչ տեղեակ տափակութիւններ, դիլլետանտներ և լսելով ըեժիսսեօրի մեծ նշանակութեան մասին ու մի թիւր հասկացողութիւն ունենալով ըեժիսսեօրական աշխատանքի մասին, օգտւելով այն հանգամանքից, որ կատարում

են ըեժիսսեօրի պաշտօնը, շատ անզամ, ի հարկէ կատարեալ թիւրիմացութեամբ, իրանց վրայ առան ըեժիսսեօրական կոչումն, երեակայելով իրանց թատրոնի տէրն ու Աստւածը և այդպիսով ստեղծեցին այնպիսի դրութիւն, որ գերասանական և ըեժիսսեօրական աշխատանքների ընդհառումը դարձաւ անխուսափելի: Կասկած չկայ, ի հարկէ, որ շնորհալի, արժանաւոր ըեժիսսեօրի նշանակութիւնը թատրոնում, ես համարում եմ շատ մեծ, ճանաչում եմ նրան արւեստագէտ, անպայման հոգեբան, ստեղծագործող ոյժ և ներկայացման գլխաւոր պատասխանատու ղեկավար:

Ես միանգամայն հեռու եմ այն կարծիքից, որ շատ միամիտներ ունին ըեժիսսեօրի մասին, թէ նա լաւ ճաշակով բեմ է սարքում, սալոն ստեղծում ու ես ինչ գիտեմ էլ ինչ. ոչ պարոններ, ըեժիսսեօրի կատարելիք դերը շատ աւելի խորն է ու նշանակալից, քան մի ճաշակով սալոնի սարքելը, կամ կահ կարասիքով բեմը լցնելը: Ծեժիսսեօրը ստեղծագործող է, նա գործ ունի աստւածների հետ, ուղում եմ ասել տաղանդների, չէ որ թատրոնի Աստւածը տաղանդն է:

Ծեժիսսեօրը պիտի լինի այնքան խոր հոգեբան, որ կարողանայ ամենանուրը կերպով ուսումնասիրել իւրաքանչիւր գերասանի գլխաւոր երակը և աստիճանական ճիշտ զարգացման ճանապարհով նպաստի թատրոնի, այս կոլլեկտիւախատանքատան, երկրի այս կուլտուրական-հասարակական եծ ինստիտուտի բարգաւաճման: Թատրոնի կենտրոնական հետաքրքրութիւնը և ներքին բովանդակութիւնը կայանում է այն գեղարւեստական գլուխ գործոցի մէջ, որ ստեղծում է դրամատուրգի, ըեժիսսեօրի և գերասա-

նական տաղանդների միացեալ աշխատանքից: Դրամատուրգի և գերասանի միջնորդը—ըեժիսսեօրը կոչւած է հարթելու, կանոնաւորելու և գերասանական ստեղծագործութեան համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու:

Երկու տիպի ըեժիսսեօրներ կան: Մէկը պիէսը մշակում ու դնում է բեմի վրայ այնպէս, ինչպէս թելագրում է իրան իր գեղարւեստական ճաշակը, Փանտազիան, զգացման չափը և բեմական հոտառութիւնը, իսկ միւս տիպի ըեժիսսեօրը խելքին զոռ է տալիս և օյխուազութիւններ անում թէ պիէսի և թէ գերասանների գլխին:

Ահա այս վերջինները պատկանում են այն ըեժիսսեօրների թւին, որոնք լսել են գէսից-գէնից ըեժիսսեօրութեան մասին և ստանալով ըեժիսսեօրի պաշտօնը, առանց հիմնական պատրաստութեան, սկսել են իմաստակութիւնների անել և մինչև իսկ միապետական իրաւունքների ձգտել: Սա խիստ վտանգաւոր երևոյթ է:

Թատրոնը, ուր կառավարչական կամ ըեժիսսեօրական տաղանդին տրւում է նախապատւութիւն, ենթարկելով նրան դերասանների ամբողջ գեղարւեստական աշխատանքը, այսպիսի թատրոնը անխուսափելիօրէն սպանում, խեղդում է գերասանի մէջ, հազիւ ծնւած ստեղծագործական ինիցիատիւան, ասել է այն՝ ինչ որ ամենանշանակալիցն ու ամենաթանկագինն է գեղարւեստի մէջ:

Դրամատիկական դերասանի տաղանդը կարող է աճել, զարգանալ, միայն այն ժամանակ, երբ նա ըրջապատւած է բարեյաջող, նպաստաւոր ազատ զարգացման պայմաններով և եթէ

այդպիսի պայմանները բացակայում են, տաղանդը անկարող կը լինի գարգանալ:

Բեժիսսեօրը պէտք է լինի զեկավար, բայց երբէք ուսուցիչ. բեժիսսեօրի ուսուցչական ցուցմունքները բացարձակապէս վնասում են դերասանի խկական տաղանդի ազատ ստեղծագործութեան ընթացքին:

Բեժիսսեօրի աշխատանքը ստուդիայում և դերասանական խմբում միանգամային տարբեր սիստեմ պիտի ունենայ: Սրա համար էլ խօսելով ստուդիայի մասին, նրա բեժիսսեօրին ես անւանել եմ «բեմի ուսուցիչ»: այնտեղ նա ոյժեր պիտի մշակի, ուղղութիւն տայ, այնտեղ նա գործ ունի դերասանացու աշակերտների հետ, որոնք մշակւում, մարզում պատրաստում են դերասանական խմբի անդամ աշխատակից-դերասան լինելու: Մինչդեռ դերասանական խումբը, արդէն մշակւած դերասաններից է լինում կազմւած կամ գոնէ, այդպէս պիտի լինի:

Եթէ ընդունում ենք, որ իւրաքանչիւր ստեղծագործութիւն անհատական է, հետեւալէս դերասանին էլ պիտի ընդունենք անհատական ստեղծագործող ոյժ: Ուրեմն էլ ինչպէս կարելի է թոյլ տալ, որ մի այլ մարդ, թէկուզ մի շատ խելօք ու շնորհալի բեժիսսեօր, յանդգնի նրան թելադրել, սովորեցնել ու խառնել նրա անհատական ստեղծագործութեան եղանակին:

Կարելի բան է, որ մի բանաստեղծի գրողի գլխին մի ուսուցիչ կանգնի և նրան գրելը սովորեցնի:

Բեժիսսեօրը պէտք է, թատրոնի էութիւնը կազմող, բոլոր առանձին-առանձին ստեղծագործութիւնները հաւաքի, հարթի, ներդաշնակի և այնպէս ներկայացնի հասարակութեան: Իսկ այդ

ներդաշնակումը այնպէս պիտի կատարվի, որ նրանից ոչ մի անհատական ստեղծագործութիւն չտուժի: Բեժիսսեօրի ցուցմունքները փորձերի ժամանակ իւր խաղով նոյնպէս նպատակայարմար չէ, որովհետեւ, ինչպէս փորձերը ցոյց են տալիս նրա մի համառօտ բացարութիւնը և փոքրիկ ցուցմունքը միանգամայն բաւական են լինում, որպէսզի գերասանն ըմբռնի և կատարի իր գերը շատ աւելի գեղեցիկ, քան այդ թերևս կարողանալ անել ինքը բեժիսսեօրը: Դերասանը կարող է տալ այն միայն, ինչ թագնւած է նրա մէջ, գերասանին որպէս նիւթ ծառայում է նրա հոգին ու մարմինը:

Բեժիսսեօրը պարտաւոր է, միշտ հաշւի առնել իւրաքանչիւր դերասանի ամենասաննշան մանրամասնութիւններն անգամ, լաւ ուսումնասիրելով, նրա հոգերանութիւնը: Սրա համար էլ շաբլօն բեժիսսեօրները դարձել են անտանելի ու վնասակար. ժամանակակից մարդը, առաւել ևս դերասանը, շատ է նրբացել: Զի կարելի միենոյն ձեռվ ցուցմունքներ տալ բոլոր դերասաններին: Իւրաքանչիւր դերասան իր տեսակի է ստեղծւած: Բեժիսսեօրը պիտի գիտենայ, թէ ում, ինչպէս մօտենայ և ինչ ձեռվ ցուցմունք տայ: Սա շատ կարենը է:

Դերասանին անհրաժեշտ է իւր անհատական, բնական ձիրքերի ազատ զարգացումը, ազատ որոնման պայմաններով շրջապատւած: Դերասանն ինքը պիտի աշխատի իր վրայ և անպայման ազատ և այդ զարգացման մէջ է կայանում թատրոնի խկական գեղարվեստական ապագան:

Դերասանական տաղանդի լայն սկզբունք, դա է թատրոնի նիւթը, առանց այդ հիւթի թատ-

բոնը կըդառնայ մի մեքենայ, նա կը չորանայ: Այժմ ես խօսում եմ ընդհանուր գծերով, առանց մանրամասնութիւնների: Այսօր ես ոչ մտադրութիւն և ոչ էլ հնարաւորութիւն ունեմ և ոչ էլ տեղն է այստեղ մանրամասն կանգ առնելու այս ծանրակշիռ հարցի վրայ: Մանաւանդ, որ այս հարցը ունենալով մասնագիտական բնաւորութիւն, նախ, որ ոչ բոլորի համար կարող է հետաքրքիր լինել և երկրորդ, որ մօտ օրերում, ես առիթ պիտի ունենամ շատ աւելի մանրամասն խօսելու թատրոնի բեմակական-գեղարւետական հարցերի մասին:

Վերջին տասնամեակն առանձնապէս աչքի է ընկնում դրամատիկական-բեֆիսեօրական արևմտի ուղղութիւնների վերաբերեալ բազմաթիւ հրատարակութիւններով:

Եթէ ես վերջի վերջոյ նպատակայարմար չը գտայ այդ ուղղութիւններից որևէ մէկին ամբողջովին հետևել, այնուամենայնիւ չեմ էլ կարող հերքել, որ դրանցից իւրաքանչիւրը տւել է իր որոշ արդիւնքը: Իմ կարծիքով այդ բոլորից պէտք է վերցնել և մտցնել մեր թատրոնում այն ամենը, ինչ որ նպատակայարմար կարող է համարւել մի առողջ թատրոնի համար:

Առհասարակ թատրոնի և մանաւանդ մեր թատրոնի գործունէութիւնը չենք կարող և չպէտք է դնենք նեղ շրջանակների մէջ:

Վերջի վերջոյ մեր նպատակը պիտի լինի զարգացնել, առաջ բերել բեմական դրածքների այնպիսի տեխնիկայ, ստեղծել այնպիսի թատրոն, ուր հաւասար յաջողութեամբ կարողանան տեղ գտնել, զանազան ժամանակներում դրամատիկական գրականութիւն ստեղծած բազմազան թատրոնները:

Մենք աչքներս չենք փակի, և թատրոնական ոչ մի նշանաւոր երևոյթ, մեր ուշադրութիւնից աննկատելի չը պիտի կարողանայ անցնել: Խուսափելով մօդայական հոսանքներից և անմիտ ծայրայեղութիւններից ընթանալու ենք ազատ ստեղծագործման և աստիճանական զարգացման ճանապարհով:

Եւ իրօք քանի-քանի տարբեր հոսանքներ, ուղղութիւններ են մուտք գործել թատրոնը: հասկանալի է ի հարկէ, որ խօսքս հայ թատրոնի մասին չէ. ես խօսում եմ ընդհանրապէս թատրոնի մասին: Քանի-քանի տեսակ բեֆորմներ են առաջարկել թատրոնի, կամ աւելի ճիշտ է ասել բեմական դրածքների տեխնիկայի արմատական վերստեղծման համար...

Բայց ինձ էլ, ձեզ էլ, ի հարկէ շատ լաւ յայտնի է, գիտենք, որ լուրջ թատրոնը չի ենթարկել այս ու այն ժամանակաւոր ազգեցութեան: Նա կունենայ իր սեպհական դաւանանքը, իր հարազատ դրօշակը: Նա երբէք չի մոռանայ այն հիմնաքարերը, որոնց վրայ կառուցվում է, կամ գոնէ պէտք է կառուցվի իսկական գեղարւեստի տաճարը: Իսկ ուրիշ ինչ գլխաւոր պայմաններ, հիմնաքարեր կարող են լինել, բայց այն որ թատրոնի հիմքն է գեղարւեստի ըսկզբունքը, թատրոնի հոգին՝ նրա բեպերտուարը, թատրոնի լեզուն՝ գեղարւեստական անսամբլը:

Սրանից գէնը ամեն ինչ թատրոնում պիտի ծառայի այս խնդիրների լուծման համար նպաստաւոր պայմաններ ստեղծելուն:

Սակայն շատ յաճախ այդ սկզբունքները զանցառութեան են մատնել, չնորիւ այն հանգամանքի, որ թատրոնի դեկը յանձնել է այն պիսի անձեռնհաս անձանց, որոնց շնորհիւ էլ

թատրոնը դաշել է անհատների քմահաճոյքի առարկայ։ Այդ անհատները, որ գլխաւորապէս դերասաններից են առաջ գալիս; աշխատում են ամեն բան բեմի վրայ իրանց խաղին յարմարեցնել, ձգտելով հասարակութեան ամբողջ ուշադրութիւնը կենարոնացնել ոչ թէ հեղինակի նշանակալից մտքերի, պիէսի գաղափարի, գեղարևստական խնդիրների վրայ, այլ իրանց սեպհական անձի վրայ։

Ծնորհիւ այս հանգամանքի է, որ շատ յաճախ ամենակարեոր նշանակալից տեսարաններ մնալով անուշադիր կատարւում են թոյլ, անհամ ու անցնում են գրեթէ աննկատելի։ Ծատ յաճախ էլ չը տարբերելով գեղարւեստական-էսթէթիկան ուժեղ տպաւորութիւնները, գոեհիկ, կոպիտ տպաւորութիւններից, ստիպում են ականատես լինել այնպիսի տեսարանների, որոնք հանդիսականների էսթեթիկական զգացմունքները միայն վիրաւորել կարող են։ Եթէ բեմի վրայ մի գոմէշ մորթեն, համոզւած եմ, որ շատ շատերի վրայ այդ բանը կարող է սարսափելի տպաւորութիւն թողնել, շատերը նոյնիսկ կարող են ուշաժափւել։

Բայց ի՞նչ. միթէ այդ կլինի գեղարւեստ։

Սակայն ինչու խեղճ գոմէշին մորթել։

Ինձ պատահել է գերասաններ տեսնել, նոյնիսկ առաջնակարգ, անուն հանած գերասաններ, որոնք բեմի վրայ թունաւորման-մահւան տեսարաններ ներկայացնելիս այնպէս են ձգւել երկարել նորից կուչ եկել իրխուացրել կրկին երկարել, նորից ոլորել, յատակը չանգուտել, յանկարծ ոտքի կանգնել, զլուխը թափահարել և ամբողջ հասակով շրխկացել, յատակին փուել ու վերջապէս մեռել։

Հարց է ծագում՝ ի՞նչ նշանակութիւն կարող էր ունենալ պիէսի համար թէ՝ ինչպէս է նա մեռնում. խնդիրը նրա մէջ է, որ մեռնում է։ Միթէ հետաքրքիր կարող է լինել թէ ինչպիսի տանջանքներով է մեռնում. բացի այդ, ով կարող է գիտենալ և արտայատել այս ու այն տեսակի մահւան տանջանքները։

Դուք կարծում էք այս բոլորը չեն հասկանում յիշւած կարգի գերասաններից շատերը…

Սակայն նման տեսարաններին յաճախ տեղի ունեցող ճիշերը և ուշաժափութիւնները, աղաղակներն ու ամբոխի բուռն ծափահարութիւնները նրանց աւելի գրաւիչ ու հետաքրքիր են թւում, բան խսկական գեղարւեստը—ահա գաղտնիքը։

Իսկ մի արւեստագէտ մարդու համար, ի հարկէ, այդքանն էլ բաւական է, որ չափի այդ թատրոնների ղեկավարների գեղարւեստական հոտառութիւնը, զգացման չափը, էսթեթիկական ճաշակն ու գեղարւեստի խնդիրների մասին ունեցած նրանց հասկացողութիւնը։

Յոյս ունեմ ոչ ոք չէ կասկածում, որ հասարակութեան ներդերի վրայ խաղաղով, նրանց վախեցնելը, սարսափի ազգելն ու հիւանդացնելը, գեղարւեստի նպատակը երբէք չի եղել։

Ես այստեղ յիշեցի միայն մէկը այն բազմաթիւ թերութիւններից, որոնք մուտք գործելով թատրոնը և շահագործելով ամբոխի թուլութիւնը, բուն են դրել, հաստատել այնտեղ։ Իսկ դրանից յետոյ, սերնդէ-սերունդ անցելով այն աստիճան են փչացրել հասարակութեան ճաշակը, որ նա ակամայ ընտելանալով այդ թերութիւն-

ներին, յաճախ ինքն է սկսել ցանկալ, փափազել
նման գոեհիկ կողիտ տեսաբանների:

Մեր ամբողջ ոյժը լարւած պիտի լինի,
թատրոնում այնպիսի մթնոլորդ ստեղծելուն,
ուր կողիտն ու գոեհիկը տեղ չունենան և նրա
բոլոր աշխատակիցներն էլ հնարաւորութիւն
ստանան ազատ ստեղծագործելու:

Իսկ այդ հնարաւոր է միայն այն դէպքում,
երբ թատրոնում տիրապետողը կը հանդիսանայ
ոչ անհատի քմահաճոյքը, այլ գեղարւեստական
խաղի, ներդաշնակ անսամբլի սկզբունքը:

Ես գիտեմ, որ իմ առաջարկած բարեփո-
խութիւններին շատերը կարող են զանազան ա-
ռարկութիւններ անել: Սկզբից ասում եմ, որ
գրամի, նիւթականի և սուղ միջոցների վրայ
հիմնւած պատճառաբանութիւնները չեմ ընդու-
նելու:

Յիշելու է, որ ներկայ Վարչութեան ընտ-
րութեան օրերին՝ Դրամատիկական ընկերութիւնը
մեռած էր համարւում, սակայն շնորհիւ շնոր-
հակալութեան արժանի ներկայ վարչութեան,
նիւթական դրութեան բարելաւման նպատակով
գործ դրած եռանդին՝ այժմ, ընկերութեան նիւ-
թականը գտնում ենք բաւականաչափ բաւարար-
ւած: Այս հանգամանքը, գալիս է կրկին անգամ
ինձ համոզելու, որ ցանկացած դէպքում միշտ
կարելի է բարենորոգութիւնների համար անհրա-
ժեշտ գումարը գտնել:

Բացի դրանից մենք պարզ տեսնում ենք, որ
բաւականաչափ բարենորոգութիւններ անելու
անհրաժեշտ գումարը ընկերութիւնն ունի իր
տրամադրութեան տակ, ես այն համոզման եմ,
որ մի թատրոնական գործ, եթէ գրւած լինի ա-
մուր հիմքերի վրայ և ցոյց տայ ակնյայտնի ար-

դիւնաւէտ գործունէութիւն՝ նրան պաշտպանող-
ներ միշտ կը գտնեին:

Չեն թողնի, որ գործը մեռնի:

Դրամատիկական ընկերութիւնը, փառք Աս-
տուծոյ, հասարակական հիմնարկութիւն է, որը
հասկանալի կերպով պիտի պահնի հասարակու-
թեան միջոցներով, և համոզւած եմ՝ հայ գի-
տակից հասարակութիւնը նրան կը պահի: Թիֆ-
րիզը պարոններ կարող է և պէտք է ունենայ իր
գեղարւեստական հայ թատրոնը: Միայն անհրա-
ժեշտ է վերստեղել այն պայմանները, որոնց
մէջ այդ թատրոնը պիտի ծնւի ու զարգանայ:

ՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Թ. Ա. Տ Ե Բ Ա Շ Ի Զ Ա Ն (սեղոն)

Այժմ, երբ ընկերութեան նոր կանոնադրութիւնը թոյլ է տալիս գործունէութիւնն ամբողջ կովկասում տարածելու, կասկած չկայ, որ պիտի վերանայ, մինչև այժմ դոյութիւն ունեցող հինգ ամսով գերասաններ հրաւիրելու սխտեմը: Սխալ է և վասակար այն կարծիքը թէ խմբի կազմը պէտք է շարունակ փոփոխութեան ենթարկել, և նոր նոր գերասաններով հասարակութեան մէջ հետաքրքրութիւն առաջ բերել: Այդպէս մտածողները, թատրոնը դարձնում են թամաշի տեղ և հէնց դրանով էլ սպանում թատրոնի սկզբունքը: Ընդհակառակը, ըստ հնարաւորութեան, պիտի աշխատել, որ խմբի կազմը քիչ փոփոխութիւնների ենթարկվի: Թող ըստ անհրաժեշտութեան աւելանան կամ պակասեն անդամները, սակայն, կարճատե սեղոնը վերջանալուց, ամբողջ խումբը համարել ազատ արձակւած և մէկ կամ երկու ամիս յետոյ նոր բանակցութիւններ սկսն, գրեթէ նոյն մարդկանց հետ, միտք չկայ: Իսկ այժմ, երբ ընկերութեան գործունէութիւնը պիտի ընդարձակվի ամբողջ կովկասում, ժամանակամիջոցն էլ անհրաժեշտ է երկարել մինչև 10 ամիս (փորձերն սկսելով օգոստոսի 15-ից և սեղոնը շարունակելով մինչև յունիսի 15-ը):

Իւրաքանչիւր տարի մինչև մայիս, երբ ըեպերտուարը կազմած, հաստատած կը լինի յաջորդ տարւայ համար, գերասանների պայմանագիրն էլ պիտի վերանորոգած լինին:


Թիֆլիզում թատերաշրջանն աւարտելուց յետոյ, խումբը իր ամբողջ կազմով, սեղոնի ընթացքում յատուկ պատրաստած դեկորացիաներով, հագուստներով, պարիկներով, լուսաւորութեամբ և այլ էֆֆեկտներով. մանրասարքով և այլ ակսեսուարով, իր տրամադրութեան տակ ունենալով Թիֆլիզի սեղոնի ամբողջ ըեպերտուարը, ընտրում է տեղին, հասարակութեան և թատրոնին յարմար պիէսներ, ու Հայոց Դրամատիկական ընկերութեան դրօշակի և կոնտրոլիները, համաձայն վարչութեան վազօրօք մշակած հրահանգների, ճանապարհում է գաւառները, տարածելով իր գործունէութիւնը ամբողջ Կովկասում:



44

Պարունակություն տառ սիմեոն Տաճին, եղբ թէ
ականակար կազմակ. համապատ իր պիր ըստ
Նոր տառություն կամաց, գրաւածութեա պայմանա-
շան է, որու պարունակ մինչ

Արքայա թագավորական ուժամբ ուժա-
մատ բարեգ իր ամրութ կազմակ. տեղակ ըստ
Հայութ յառաջ պահպանակ պահպանակ է
առաջարկեալ, որորին առ բառակա-
մատ և այ էքչեկանեալ մահապատ և
այ առաջարկամատ իր ուղարկութեան տառ
առաջարկ թիֆիթ սիմեոն ամրութ թագա-
վորակ քայլութ է առօդի համարական թեան և
թագավոր բարեգ պիտունը, ու Հայու Գրամա-
տինական ընկերութեան պահակ և կանոնա-
կարու, համական մարտաքան քայլութ ու-
ղակ կառապատիքի, համապատ և պահա-
կարու, տարածեալ իր պարունակին ամրու-
թապատ է



7201

